

ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մ. Ս. ՔԵՇԻՇՅԱՆ

ԳՊՀ թանգարանի գիտաշխատող

Սևանի ավազանի բնակլիմայական նպաստավոր պայմանների և աշխարհագրական հարմար դիրքի շնորհիվ՝ տարածքը հնագույն ժամանակներից ի վեր եղել է խիտ բնակեցված: Ավազանից հայտնաբերված հնագիտական նյութի հարուստ շտեմարանը հնարավորություն է ընձեռել պատկերացում կազմել հազարամյակների խորքից եկող մի հզոր մշակույթի մասին, որը կարևոր դեր է ունեցել թե՛ Սևանի ավազանի, և թե՛ Հայկական լեռնաշխարհի ու հարակից տարածքների մշակույթի զարգացման համար:

Սևանի ավազանը ուշագրավ է ոչ միայն պեղածո նյութերով, այլև հուշարձաններով ու կոթողներով, որոնք հազարամյակներով գոյատևել են բաց երկնքի տակ (բերդ-ամրոցներ, դամբարանադաշտեր ու բնակատեղիներ): Դրանցով տարբեր ժամանակաշրջաններում հետաքրքրվել են թե՛ հայ, թե՛ օտար ուսումնասիրողները, գիտնականները և ճանապարհորդները, թողնելով բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ և գիտական աշխատություններ:

Ավազանի առաջին գիտական ուսումնասիրողներից է Էջմիածնի միաբանության անդամ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը,¹ ով 1862 թ. հայտնաբերում է Ծովինարի բիայնական 22 տողանոց սեպագիր արձանագրությունը, այն ընդօրինակում՝ ուղարկելով Մոսկվա: 1863 թ. այն տպագրվում է «Համբավաբեր Ռուսիո» շաբաթաթերթի 53-րդ համարում: Կրկին նրա հեղինակությամբ, նույն համարում, լույս է տեսնում նաև, Էլարի սեպագիր արձանագրությանը վերաբերող նրա ընդօրինակումը: Պրոֆեսորներ Վ. Բելքն ու Սեյսը հետազոտելով Ծովինարի արձանագրությունը գալիս են այն եզրահանգմանը, որ այն պատկանել է Բիայնական արքա Սարգուր Բ-ին (մ.թ.ա 764-735 թթ.):

Հնագիտական մասնակի պեղումներ է կատարել Ի. Ս. Պոլյակովը՝ 1866 թ. Լճաշեն (նախկին Պորտակ) գյուղի շրջակայքի կիկլոպյան ամրոցի ավերակներում, որից հայտնաբերված նյութերը հրատարակել է 1879 թ.:²

Սևանի ավազանում արժեքավոր գիտական ուսումնասիրություններ է իրականացրել Ա. Ա. Իվանովսկին. 1893 թ. պեղել է Չկալովկա (նախկին Նա-

¹ Սմբատյանց Մ., Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր Բայազետ գաւառն է կոչի, Վաղարշապատ, 1895:

² Поляков И.С., Дневник археологических работ, проведенных в Закавказском крае осенью 1873г., Протоколы подготовительного комитета, С-Пб, 1873, с. 158-215.

դեժդինո) գյուղի, այնուհետև Մարտունու շրջանի Ներքին Գյոզալդարա (ներկայիս Վարդենիկ) գյուղի տարածքները: Հայտնաբերած նյութերը հրատարակվել են 1911թ.:³ Գյոզալդարայում պեղված քարարկյա դամբարանների մասին մա գրում է. «...Հայտնաբերված իրերը ընդհանրապես ցույց են տալիս լրիվ մեմնություն Գետաբեկի, Կարա-Մուրադի, Կարա-Բուլախի և Կալա-Քենտի իմ կողմից բացված քարարկյաների իրերի հետ»:⁴

Հայ հնագիտության, հատկապես՝ Սևանի ավազանի հնագիտական ուսումնասիրության գործում մեծ է Երվանդ Լալայանի ներդրումը: Նա 1906-08 թթ. պեղումներ է կատարել Սևանի (մախկին Ելենովկա), Լճաշենի (Օրդաքլու), Նոր Բայազետի (ներկայիս Գավառ), Մարտունու (Ղարանլուղ) և Վարդենիսի (Բասարգեչար) շրջաններում: Ընդհանուր առմամբ պեղել 516 դամբարան,⁵ որոնցից հայտնաբերվել են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների փայլուն նյութեր: Արդյունքն ամփոփվում է 1931թ. հրատարակվում է նրա՝ «Դամբարանների պեղումները հորհրդային Հայաստանում» աշխատության մեջ:⁶

Ըստ Կ. Վ. Մելիք-Փաշայանի բնութագրման Ե. Լալայանի կողմից պեղված նյութերը «չափազանց կարևոր նշանակություն ունեն նախահայկական մշակույթի շատ հարցեր պարզելու համար»:⁷

Հատուկ ուշադրության են արժանի հայտնաբերված դաշույնները, թրերը, անդրկովկասյան տիպի սակրերը, վանակատե և բրոնզե նետասլաքները, միզակածայրերը: Հատկապես հետաքրքրական են սև փայլաներկով կավամանները, խոհանոցային պնակները, որոնք համաժամանակյա են Անդրկովկասի տարբեր հնավայրերից հայտնաբերված դամբարանների իրերին: Ջարդարանքի և պերճանքի առարկաներից ուշագրավ են սարդիոնե, ագաթե և դաշտային շաղախից պատրաստված ուլունքները, բրոնզե ապարանջանները, մանյակները, կոճակները, արձանիկները, հերազարդերը, զինդերը, ծարմանդները, հայելիները, քառանիվ փայտե սայլերը, արծաթե, պղնձե և երկաթե իրերը:⁸

Ա. Իվանովսկու և Ե. Լալայանի պեղած նյութերը մեծամասամբ թվա-

³ **Ивановский А. А.**, По Закавказью. Археологические исследования и наблюдения 1893, 1894 и 1896 гг.- Материалы по археологии Кавказа, собранн. Экспедициями, Изв. Археолог. общ. вып. VI, М., 1911, с. 143.

⁴ Նույն տեղում:

⁵ **Լալայան Ե.**, Դամբարանների պեղումներ հորհրդային Հայաստանում, Ե., 1931, էջ 67: **Տե՛ս նաև, Хачатрян Т.С.**, Археологические исследования в Восточной Армении во второй половине XIX и в начале XX веков.- «Պատմության հարցեր», գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու, Ե., 1978, №1, էջ 192:

⁶ **Լալայան Ե.**, նշվ. աշխ.:

⁷ **Մելիք-Փաշայան Կ. Վ.**, Երվանդ Լալայան (Ծննդյան 100-ամյակի առթիվ).- Պատմա-բանասիրական հանդես (ՊԲՀ), 1964, №3, էջ 36:

⁸ **Լալայան Ե.**, նշվ. աշխ., էջ 118-183:

գրվում են ուշ բրոնզի և երկաթի դարաշրջաններով: Նկատենք, որ Ե. Լալայանը բավարարվել է ընդամենը դրանց սոսկ նկարագրությամբ և գիտական հիմնավոր վերլուծության չի ենթարկել:

1927թ. ամռանը Նոր Բայազետի «Բերդի գլուխ» կոչվող բիայնական հալդիհի ամրոցի ավերակներից Թադևոս Ավդալբեգյանը հայտնաբերում է սեպագիր արձանագրություն, որը պատկանել է բիայնական արքա Սարդուրի որդի Ռուսային:⁹ Այս հայտնագործությունից հետո սկսվում են պարբերական ուսումնասիրությունները Սևանի ավազանում, և հետագուովում էին ինչպես հնագույն շրջանի, այնպես էլ միջնադարյան հուշարձանները, բնակատեղիների ավերակները, դամբարանադաշտերն ու գերեզմանատեղիները, վանքերն ու մատուռները, վիմագիր արձանագրությունները:

1928 թ. Աշխարհբեկ Քալանթարի ղեկավարությամբ, կազմակերպվում է Սևանի գիտական առաջին արշավախումբը, որի կազմում էին լուսանկարիչ Արտաշես Վրույրը, ճարտարապետ Գ. Սիրունյանը, հնագետ-վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը, հնագետ Եվգենի Բայբուրդյանը: Արշավախմբի նպատակն էր Սևանի ավազանում և նրա շրջակայքում հաշվառման ենթարկել հնագիտական հուշարձանները, չափագրել դրանք ու վերծանել վիմագիր արձանագրությունները:

Արդյունքում, Ս. Բարխուդարյանի հեղինակությամբ 1935 թ. լույս է տեսնում «Վելիքուխի երկիրը» գիտական արժեքավոր ուսումնասիրությունը,¹⁰ որում հեղինակը համաճանաչում է ուսումնասիրում է Նոր Բայազետ քաղաքի շրջակայքի և շրջանի 22 հնավայրեր, ներկայացնելով դրանց ծագման և նախաուրարտական դարաշրջանի համառոտ պատմությունը: Այս աշխատության համար նա արժանանում է «Նուբարյան» մրցանակի:¹¹ Գիտական իր փորձառությունը Ս. Բարխուդարյանը ստացավ Ե. Լալայանից, ով քաջատեղյակ էր ողջ Սևանի ավազանին ու Հայաստանին, նրանք միասին հայտնաբերեցին Արտաշեսյան սահմանաքարերը, որոնց գիտական հիմնավորումը առաջին անգամ տվեց Ս. Բարխուդարյանը: Հիրավի արժեքավոր տեղ ունեն նրա հետագա գիտական ուսումնասիրությունները, որոնք կապված են ավազանի վիմագրերի ուսումնասիրություններին: Ս. Բարխուդարյանը հավաքեց ավազանի 1547 արձանագրություն (ընդգրկված է Գեղարքունիք մարզի ներկայիս տարածաշրջանն ամբողջությամբ):

1931-32 թթ. Բ. Պիտրովսկու և Գ. Գյոզալյանի ղեկավարությամբ կա-

⁹ Ավդալբեգյան Թ., Նոր Բայազետի նորագույն սեպագիրն ու նրա գիտական միջավայրը.- ՀՍՍՀ ԱՐՄՖԱՆ-ի Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր, Ե., 1927, թիվ 2:

¹⁰ Բարխուդարյան Ս. Գ., Վելիքուխի երկիրը, Ե., 1935:

¹¹ Бархударян С. Г., Страницы из истории Арцаха и армяно-албанских отнашений, Е., 2011, с. 4.

տարված հնագիտական արշավախմբերի ուսումնասիրությունները ևս կարևոր են, որոնք վերաբերում էին նյութական հուշարձաններին: Դրանք ամրոցների տիպերի որոշման և ժամանակագրման մասին առաջին գիտական եզրահանգումներն են: Նրանց կողմից կազմվեց և առաջին անգամ հրատարակվեց Ղշլաղի և Մրթալի ձոր կոչվող ամրոցի հատակագծերը:

1934 թ. Բ. Պիոտրովսկին, Ն. Տոկարսկին և Ս. Բարխուդարյանը ուսումնասիրում և նմանահանում են Մարտունու սեպագիր արձանագրությունը: Արշավախումբը միաժամանակ հետազոտական նախնական պեղումներ է իրականացնում ամրոցի ստորին շերտերում:¹²

Տարածաշրջանի Վանի թագավորության սեպագիր, և ավելի ուշ ժամանակաշրջանների արձանագրություններ հայտնաբերել, ուսումնասիրել և հրատարակել են Ի. Մեչչանինովը,¹³ պրոֆեսոր Գ. Ղափանցյանը,¹⁴ Ի. Ֆրիդրիխը:¹⁵

Սևանի ավազանի պեղումներով պարբերաբար զբաղվել է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ինչպես և Հայաստանի պատմության պետական թանգարանի հնագիտական արշավախումբը՝ Հարություն Մնացականյանի ղեկավարությամբ, որին մանրամասն և հանգամանալից կերպով անդրադարձել է Վ. Ավետյանը, իր՝ «Սևանի ավազանի մշակույթը մ.թ.ա. III-II հազարամյակներում» աշխատության մեջ,¹⁶ ինչպես նաև Մ. Քեչիշյանը՝ նրա հուշ-կենսագրական աշխատության մեջ:¹⁷

1947 թ. Հ. Մնացականյանը ՀՊՊԹ-ի կողմից գործուղվում է Սևանի ավազան՝ պատմական հուշարձանների հետազոտման և հետախուզական պեղումներ կատարելու համար, իսկ արդեն 1952-74 թթ. ղեկավարում է Սևանի հնագիտական արշավախումբը: Ուսումնասիրել է նախկին՝ Սևանի, Կամոյի, Մարտունու, Վարդենիսի շրջանների (ներկայիս Գեղարքունիքի մարզ) հնագույն ամրոցները, դամբարանները, բնակատեղիները և դամբարանադաշտերը: Ընդհանուր հաշվով պեղել է մոտ 9000 հնագիտական նյութ, հիմնավորապես բրոնզի դարաշրջանի:

1952-53 թթ. ընդարձակ պեղումներ է կատարել Սևանի շրջանի Ցամաքաբերդ գյուղի տարածքում, «Գյամուբողազ» կոչվող վայրում: Հայտնաբեր-

¹² Ավետյան Վ. Վ., Սևանի ավազանի մշակույթը մ.թ.ա. III-II հազարամյակներում, Ե., 2003, էջ 14:

¹³ Мещанинов И. И., Циклопические сооружения Закавказья.- Известия ГАИМК, XIII, М., 1932, №4-7.

¹⁴ Ղափանցյան Գ., Հնության մի քանի հիշատակարաններ.- «Արարատ», 1914, թիվ 1: *Նույնի*, Ուրարտուի պատմությունը, Ե., 1940:

¹⁵ Ավետյան Վ. Վ., նշվ. աշխ., էջ 14:

¹⁶ Նույն տեղում: *Տես նաև*, Բ. Մ. Мунчаев, Кавказ на заре бронзового века, М., 1975, с. 39.

¹⁷ Քեչիշյան Մ. Ս., Կյանքի չգրված էջեր (Հարություն Հովակիմի Մնացականյան), Կենսագրական, Ե., 2009: Кешишян М. С., Ненаписанные страницы жизни Арутюна Мнацаканяна, М., 2012.

ված հնագիտական նյութի մեջ արժեքավոր է նրա պեղած դիաթախտը: 1953թ. պեղումներ է իրականացնում Վարդենիսի Ակունք գյուղից հարավ գտնվող դամբարանադաշտում և ամրոցում: Նույն տարում, աշխատանքները շարունակում է Կամոյի շրջանի Մուխան (ներկայիս Ծովազարդ) գյուղի մոտ, Սևանի ջրազատված մասերում: Աշխատանքները շարունակաում է նաև 1954 թվականին: Նույն, 1953 թ. պեղումներ է կատարում նաև Նորատուսում: Նկատենք, որ այստեղ պեղումներ է իրականացրել նաև Զ. Մարտիրոսյանը, բացելով մ.թ.ա. 10-7-րդ դդ. վերաբերող դամբարաններ:¹⁸

Զ. Մնացականյանի կանոնավոր պեղումները Սևանի ավազանում սկսվում են 1952-74 թթ., հատկապես Լճաշենում: Նրա կատարած աշխատանքը և պեղած հնագիտական նյութերն իրենց քանակով և հարստությամբ՝ առ այսօր մնում են անգերազանցելի: Գիտական ծանրակշիռ արժեք են ներկայացնում նրա բազմաթիվ հողվածները և ուսումնասիրությունները, որոնց մեծագույն մասը նվիրված են Սևանի ավազանի պեղածո հնագիտական նյութերին:¹⁹ Անխոնջ և երկարամյա աշխատանքի շնորհիվ, նրա կողմից պեղումներ են կատարվել հիմնավորապես Լճաշենում, որտեղից պեղված նյութերից շատերն իրենց զուգահեռը չունեն:

Նախապես, 1948 թվականին, Զ. Մնացականյանը ինքնուրույն պեղումներ է կատարել Սևանի ավազանում, կապված իր ատենախոսության թեմայի հետ, հրատարակելով՝ «Արևապաշտության հետքերը հին Հայաստանում, ըստ բրոնզե պեղածո իրերի» աշխատությունը: Նա իր ժամանակների այն միակ հնագետն էր, ով Հայաստանում (Լճաշենում) առաջին անգամ հայտնաբերեց եռագույն խեցեղեն և հիմնավոր փաստարկներով ապացուցեց, որ դա Սևանի ավազանի, հատկապես Լճաշենի մենաշնորհն է: Ելնելով իր իսկ պեղած նյութերի ուսումնասիրություններից՝ նա առաջիններից էր, որ ներկայացրեց Լճաշենի հնագույն մշակույթի զարգացման հիմնական էտապները:

¹⁸ **Мартirosян А. А.**, Армения в эпоху бронзы и раннего железа, Е., 1964.

¹⁹ **Մնացականյան Զ. Զ.**, Զնագույն դամբարանադաշտ Ցամաքաբերդ գյուղի մոտ.- Տեղեկագիր ՀՍՄՀ ԳԱ հասարակական գիտությունների, Ե., 1954, №5, էջ 85-94: **Նույնի**, Զնագիտական նոր պեղումներ Սևանի ավազանում.- Սովետական Հայաստան, Ե., 1956, №1, էջ 36-37: Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները.- ՊԲՀ, Ե., 1965, №2, էջ 95-114: Արևապաշտության հետքերը հին Հայաստանում.- Աշխատություններ Հայաստանի Պատմության Պետական Թանգարանի, Ե., 1948, հ. 1, էջ 67-95: Տեղեկանք Սևանա լճի մասին.- Սովետական Հայաստան, Ե., 1973, №2, էջ 36-37: О Двухцветной керамике Лчашена.- Տեղեկագիր, 1957, №5, էջ 107-116. Археологические находки в селении Басаргечар АРМ ССР.- КСИИМК, М., 1955, №60, с. 39-44. Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г.- Советская Археология, М., 1957, №2, с. 146-153. Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан.- СА, 1960, №2, с. 139-152. Лчашенские курганы.- КСИА, 1961, №85, с. 66-72. Кульпура эпохи бронзы на побережье оз. Севан Армянской ССР.- XXV международный конгресс востоковедов, М., 1960. Севан раскрывает свои тайны.- Литературная Армения, Е., 1967, №4, с. 74-82.

Հետագուտելով հիմնականում Սևանի ավազանի բրոնզեդարյան մշակույթը (մ.թ.ա. XXXV-XIII), նա եկավ այն եզրահանգման, որ այն տեղական ծագում ունի: Լճաշենյան պեղված նյութերի հիման վրա և դրանց համատեքստում, Հ. Մնացականյանն իր աշխատություններում անդրադարձել է Սևանի ավազանի հնագույն բնակիչների թաղման սովորույթներին, արվեստին (փայտարվեստ, խեցեգործություն, մետաղագործություն, քանդակագործություն ևն), հողկոր պատկերացումներին և պաշտամունքին, դամբարանների տեսակներին, նաև տնտեսության ու անասնապահության կարևորագույն հարցերին: Սրանց հիման վրա է, որ անվանի հնագետը լճաշենյան իրականությունը դիտեց լեռնաշխարհի տեղական, բնիկ մշակույթ, համեմատելով դրա փոխազդեցությունը այլ մշակույթների հետ:

Հ. Մնացականյանի արշավախմբում, տարբեր տարիների, ավազանի հնագիտական պեղումներին մասնակցել են Տելեմակ Խաչատրյանը, Ստեփան Եսայանը, Գեղեոն Միքայելյանը, Էմմա Խանգադյանը, Հասմիկ Իսրայելյանը, Սիմոն Հմայակյանը, Օնիկ Խնկիկյանը, Վարշամ Ավետյանը և այլք²⁰:

Առանձին դամբարաններ են պեղել. Լճաշենում՝ Հ. Իսրայելյանը,²¹ Ներքին Գետաշենում՝ Օ. Խնկիկյանը,²² Լճաշենի, Սարուխանի, Ներքին Գետաշենի և «Մրթաի ձոր» հնավայրերում պեղումներ են կատարել Ա. Փիլիպոսյանը²³ և Լ. Պետրոսյանը:²⁴

Շուրջ չորս տասնամյակ Սևանի ավազանում հնագիտական պեղումներ է իրականացրել է Վ. Վ. Ավետյանը: 1959-72 թթ. Սևանի ավազանի հնագիտական աշխատանքներին մասնակցել է որպես գիտաշխատող, ջոկի պետ և արշավախմբի պետի տեղակալ: 1975-86 թթ. ղեկավարել է Լճաշենի հնագիտական արշավախումբը:

Հայտնաբերել և ուսումնասիրել է Մեծեփի²⁵ և «Սևանա կղզու» կիկլոպ-

²⁰ Ավետյան Վ. Վ., Սևանի ավազանի մշակույթը..., էջ 16:

²¹ Իսրայելյան Հ. Ռ., Լճաշենի դամբարանի պեղումները.- Հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ) 1977-78 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Ե., 1979:

²² Խնկիկյան Օ. Ս., Ներքին Գետաշենի թիվ 4 դամբարանաթումբը.- ՀԱԻ 1986-87 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Ե., 1987:

²³ Փիլիպոսյան Ա. Ս., Պեղումներ Սևանի կոլեկտորի տարածքում.- ՀԱԻ 1988-89 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական մատչելի զեկուցումների թեզիսներ (ԴՀԱԱԳ ԶԹ) 1988-89, Ե., 1989: Նույնի, Պեղումներ Սևանի կոլեկտորի Նորատուսի հատվածում.- ԴՀԱԱԳ ԶԹ 1989-90, Ե., 1991: Նույնի, Հետախուզական պեղումներ «Մրթաի ձոր» դամբարանադաշտում.- նույն տեղում: Փիլիպոսյան Ա. Ս., Հովհաննիսյան Վ. Է., Պեղումներ Ներքին Գետաշեն գյուղում.- նույն տեղում:

²⁴ Պետրոսյան Լ. Ա., Սարգսյան Բ. Լ., Լճաշենի դամբարանադաշտերը.- ԴՀԱԱԳ ԶԹ 1985-86, Ե., 1987:

²⁵ Ավետյան Վ. Վ., Մեծեփի կիկլոպյան ամրոցը.- Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ասպիրանտական գիտական աշխատությունների ժողովածու, Ե., 1967:

յան ամրոցները, Ծովագյուղի, Ծովագարդի (Մուխան), Զովաբերի (Յայջի), Դոմաշենի, Վարսերի դամբարանադաշտերը, հայտնաբերել Մարտունու շրջանի Թմբուկ այրի (նախկին Նաղարախանա) դամբարանադաշտը և այդ տարածքում գտնվող վիշապաքարեր և մոնումենտալ քանդակագործության նմուշներ (աղավնակերպ և մարդակերպ): Զեղինակ է Սևանի ավազանի հնագիտական բազմաթիվ ուսումնասիրությունների:²⁶

Զկալովկա, Շորժա և Արտամիշ գյուղերի մոտ հայտնաբերել և ուսումնասիրել է լճափնյա ժայռերին փորագրված նշումներ, որոնք վերաբերում են Սևանա լճի մակարդակի տատանումներին:²⁷

Սևանի ավազանի հնագույն մշակույթի հիմնավոր ուսումնասիրությանն է նվիրված Վ. Ավետյանի Սևանի ավազանի մշակույթը մ.թ.ա. III-II հազարամյակներում (Երևան, 2003) ստվարածավալ աշխատությունը:

Հայտնաբերել և ուսումնասիրել է Լճաշենի դամբարանադաշտի IV տեղամասը: Տարիներ շարունակ ղեկավարելով Լճաշենի հնագիտական արշավախումբը՝ պեղել է շուրջ 200 դամբարան:

Սևանի ավազանի հնագիտական հուշարձանները շարունակվում են ուսումնասիրվել նաև մեր օրերում, հայտնաբերվում են նոր հուշարձաններ և հնագիտական նյութեր: Այն անսպառ շտեմարան է՝ ծածկված հնագույն մշակույթի հազարամյա գաղտնիքի շղարշով:

Բանալի բառեր - Սևանի ավազան, Հայկական լեռնաշխարհ, սեպագիր արձանագրություն, հնագիտական պեղումներ, Նոր Բայազետ, նյութական հուշարձաններ:

²⁶ **Ավետյան Վ. Վ.**, Հայաստանի բնության պատմությունից.- Հայաստանի բնություն, Ե., 1969, №11, էջ 25-26: **Տե՛ս նույնի**, Սևանի ավազանի բրոնզեդարյան ամասնապահությունը.-Լրաբեր հասարակական գիտությունների (ԼՀԳ), 1977, №3, էջ 83-90: Գործնական աշխատանքներ հնագիտությունից, Ե.,1983: Լճաշենի 1984-85թթ. պեղումները.- ԼՀԳ, 1986, №10, էջ 90-96: Հին Հայաստանի փոխանակային առնչությունների փաստեր Սևանի ավազանի հնագիտական հուշարձաններում.- Հայաստանի պատմական կապերը հարևան երկրների և ժողովուրդների հետ (Գիտական աշխատությունների թեմատիկ ժողովածու), Ե., 1986, էջ 112-120: Սևանյան սայլերը.- Թեզիսներ և Արվյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցողների և գիտաշխատողների 48-րդ գիտաժողովի զեկուցումների, Ե.,1998, էջ 219: Փայտամշակումը Սևանի ավազանում միջին բրոնզի դարում.- Պատմա-բանասիրական հանդես (ՊԲՀ), 1999, №2-3, էջ 232-240: Սևանի ավազանի բրոնզեդարյան ոսկերչության պատմությունից.- ՊԲՀ, 2000, №3, էջ 234-240: Միջին բրոնզեդարյան նյութեր Այրիվանից.- և Արվյանի անվան ՀՊՄՀ գիտական հոգվածների ժողովածու, Ե., 2003, պրակ I, էջ 304-310: Հնագույն մետաղամշակությունը Սևանի ավազանում.- ԳՊՀ գիտական հոգվածների ժողովածու, 2010, №12, էջ 128-138:

²⁷ **Ավետյան Վ. Վ.**, Սևանի ավազանի մշակույթը..., էջ 17:

HISTORY OF THE ANCIENT RESEARCH OF THESEVAN BASIN POOL

M. S. KESHISHYAN

Researcher of GSU Museum

The pool of the Sevan has been inhabited since ancient times. Rich ancient material has been discovered in the ancient settlements. Researches of the ancient monuments of the lake have started since 19th century. Some of the first researchers are M. Smbat'yants, Belk, Seys, Polyakov and Ivanovki. Ervand Lalayan has a great merit in the research of monuments. S. Barkhoudaryan, B. Pioatrovski, Tokarski have done researchers im different years.

An archeologist named H. Mnatsakanyan led an archeological expedition in the Sevan, excavating various regional bronze age monuments. The following archeologists such as: H. Martirosyan, S. Esayan, G. Mikhaelyan, E. Khanzadyan, V. Avetyan, H. Israelyan, S. Hmayakyan, O. Khnkikyan participated in the staff of his expedition.

The monuments of lake Sevan pool arouse a great interest in the research of Armenian ancient culture and continue to be researched nowadays.

ИЗ ИСТОРИИ АРХЕОЛОГИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ БАСЕЙН ОЗ. СЕВАН

М. С. КЕШИШЯН

Научный сотрудник музея ГГУ

С древнейших времен территория Севанского бассейна была заселенной. Из региональных исторических памятников был раскопан богатый археологический материал. В конце XIX-ого века начались исследования археологических памятников бассейна. Первыми исследователями были ученые М. Смбатянц, Белк, Сейс, Поляков и Ивановский. В дело изучения памятников большой вклад внес Ер. Лалаян. В разные годы исследованиями занимались С. Бархударян, Б. Пиотровский, Токарев и др.

В 1952-74гг. археологическую экспедицию Севанского бассейна возглавлял археолог Арутюн Мнацаканян, который раскопал множество памятников бронзового века. При раскопках в составе его экспедиции были археологи А. Мартиросян, С. Есаян, Г. Микаелян, Э. Ханзадян, В. Аветян, А. Израелян, С. Амаякян, О. Хнкиян.

Памятники бассейна оз. Севан играют важную роль в сфере исследования древнеармянской культуры, их изучение продолжается и в наши дни.